## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## «ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

*01 ապրիլի 2020թ.*

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահ**
**ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 65-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Նախագծին կից ներկայացվում են՝

- խմբակցության որոշումն օրենքի նախագիծը շրջանառության մեջ դնելու մասին,
- նախագծի ընդունման հիմնավորումը,
- տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով ներկայացվում են գործող օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները/լրացումները:

Նախագծի հիմնական զեկուցողն է խմբակցության պատգամավոր Տարոն Սիմոնյանը:

Խնդրում ենք ներկայացված նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 12 թերթ:

Հարգանքով՝

**ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ**

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն
0095 Երևան,
Բաղրամյան 19, 134

Republic of Armenia
Yerevan 0095
19 Baghramyan Street, 134

+374 11 513 423 | www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# *Ո Ր Ո Շ Ու Մ*
## *ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՇՐՋԱՆԱՌՈւԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈւ ՄԱՍԻՆ*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 65-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն իր 2020 թվականի <u>մարտի</u> <u>25</u>-ի նիստում

***Ո Ր Ո Շ Ե Ց***

հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ և շրջանառության մեջ դնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

*126 Է. Մարուքյան* ________________

| | |
|---|---|
| *125 Գ. Գորգիսյան* ________________ | *123 Ս. Ալեքսանյան* ________________ |
| *116 Ա. Խաչատրյան* ________________ | *124 Գ. Բաղդասարյան* ________________ |
| *117 Ա. Սամսոնյան* ________________ | *127 Մ. Թանդիլյան* ________________ |
| *118 Հ. Բաբայան* ________________ | *128 Է. Անդրեասյան* ________________ |
| *119 Ա. Եղիազարյան* ________________ | *129 Ռ. Ստեփանյան* ________________ |
| *120 Ա. Կոստանյան* ________________ | *130 Տ. Սիմոնյան* ________________ |
| *121 Կ. Սիմոնյան* ________________ | *131 Հ. Այվազյան* ________________ |
| *122 Ա. Գրիգորյան* ________________ | *132 Ս. Մինասյան* ________________ |

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# *Օ Ր Ե Ն Ք Ը*
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 05-ի քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ «Օրենսգիրք») լրացնել նոր $408^1$-ին հոդվածով.

**«Հոդված $408^1$. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը**

*1.* Պայմանագրային պարտավորության խախտման համար անձը ենթակա չէ պատասխանատվության, եթե պարտավորությունը չկատարելը կամ անպատշաճ կատարելն անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) ազդեցության հետևանք է, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

*2.* Անհաղթահարելի ուժ է համարվում այն իրադարձությունը,

- որի տեղի ունենալը որևէ կերպ կախված չէ պարտապանի կամքից (արտաքին ազդեցություն) և դուրս է նրա վերահսկողությունից (անկառավարելի),
- որի ազդեցության հետևանքներից հնարավոր չէ խուսափել՝ կիրառելով անհրաժեշտ միջոցներ (անկանխելի),
- որը սահմանափակում է պարտապանի կողմից պարտավորության պատշաճ կատարումը (ուղղակի ազդեցություն),
- որը հնարավոր չէր կանխատեսել պայմանագրի կնքման պահին (անկանխատեսելի):

***3.*** Սույն օրենսգրքի իմաստով՝ անհաղթահարելի ուժ են համարվում ռազմական գործողությունները (զինված ընդհարումները), պատերազմը (այդ թվում՝ քաղաքացիական), արտակարգ կամ ռազմական դրությունը կամ արտակարգ իրավիճակը, տարերային աղետը, համաճարակը կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հատկանիշներով բնորոշվող այլ իրադարձությունը:

***4.*** Պայմանագրով կարող է նախատեսվել այլ տեսակի անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պարտավորությունների կատարման հետաձգում կամ կասեցում, դրանց կատարումից կամ պատասխանատվությունից ազատում:

***5.*** Եթե կողմը վիճարկում է անհաղթահարելի ուժի ազդեցության փաստը, ապա վեճը լուծվում է դատական կարգով: Ընդ որում, պարտավորությունն անհաղթահարելի ուժի ազդեցությամբ չկատարելու կամ անպատշաճ կատարելու փաստն ապացուցում է պարտապանը:»:

***Հոդված 2.*** Օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասում «, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների» բառերը փոխարինել «ազդեցության» բառով:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 864-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «, ինչպես նաև տարերային բնույթի այլ երևույթների (հրդեհների, ջրհեղեղների և այլնի) կամ ռազմական գործողությունների» բառերը փոխարինել «ազդեցության» բառով:

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում է 2020 թվականի մարտի 16-ից հետո ծագող իրավահարաբերությունների վրա:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ**

**Հոդված 408. Պարտավորության խախտման հասկացությունը**

Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

**Հոդված 408$^{1}$. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը**

1. Պայմանագրային պարտավորության խախտման համար անձը ենթակա չէ պատասխանատվության, եթե պարտավորությունը չկատարելը կամ անպատշաճ կատարելն անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) ազդեցության հետևանք է, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Անհաղթահարելի ուժ է համարվում այն իրադարձությունը,

- որի տեղի ունենալը որևէ կերպ կախված չէ պարտապանի կամքից (արտաքին ազդեցություն) և դուրս է նրա վերահսկողությունից (անկառավարելի),
- որի ազդեցության հետևանքներից հնարավոր չէ խուսափել՝ կիրառելով անհրաժեշտ միջոցներ (անկանխելի),
- որը սահմանափակում է պարտապանի կողմից պարտավորության պատշաճ կատարումը (ուղղակի ազդեցություն),
- որը հնարավոր չէր կանխատեսել պայմանագրի կնքման պահին (անկանխատեսելի):

3. Սույն օրենսգրքի իմաստով՝ անհաղթահարելի ուժ են համարվում ռազմական գործողությունները (զինված ընդհարումները), պատերազմը (այդ թվում՝ քաղաքացիական), արտակարգ կամ ռազմական դրությունը կամ արտակարգ իրավիճակը, տարերային աղետը, համաճարակը կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հատկանիշներով բնորոշվող այլ իրադրությունը կամ իրադարձությունը:

4. Պայմանագրով կարող է նախատեսվել այլ տեսակի անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պարտավորությունների կատարման հետաձգում կամ կասեցում, դրանց կատարումից կամ պատասխանատվությունից ազատում:

~~1.~~5. Եթե կողմը վիճարկում է անհաղթահարելի ուժի ազդեցության փաստը, ապա վեճը լուծվում է դատական կարգով: Ընդ որում,

պարտավորությունն անհաղթահարելի ուժի ազդեցությամբ չկատարելու կամ անպատշաճ կատարելու փաստն ապացուցում է պարտապանը:

**Հոդված 417. Պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության հիմքերը**

1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների ազդեցության հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

4. Պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար պատասխանատվությունը վերացնելու կամ սահմանափակելու մասին նախապես կնքված համաձայնությունն առոչինչ է:

**Հոդված 864. Փոխադրողի՝ տրանսպորտային միջոցներ չտրամադրելու համար և առաքողի՝ տրամադրված տրանսպորտային միջոցները չօգտագործելու համար պատասխանատվությունը**

1. Փոխադրողը, ընդունված հայտին (պատվերին) կամ պայմանագրին համապատասխան, բեռի փոխադրման համար տրանսպորտային միջոցները չտրամադրելու, իսկ առաքողը՝ բեռը չներկայացնելու կամ տրամադրված տրանսպորտային միջոցներն այլ պատճառներով չօգտագործելու համար կրում են օրենքով, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ սահմանված պատասխանատվություն:

2. Բեռ փոխադրողը և առաքողն ազատվում են տրանսպորտային միջոցները չտրամադրելու կամ տրամադրված տրանսպորտային միջոցները չօգտագործելու համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել՝

1) անհաղթահարելի ուժի, ինչպես նաև տարերային բնույթի այլ երևույթների (հրդեհների, ջրհեղեղների և այլնի) կամ ռազմական գործողություններիազդեցության հետևանքով.

2) որոշակի ուղղություններով բեռների փոխադրումներն օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես դադարեցնելու կամ սահմանափակելու հետևանքով.

3) օրենքով սահմանված այլ դեպքերում:

## *Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Մասնավոր իրավահարաբերություններում ընդհանուր սկզբունքին համապատասխան՝ կողմերը պարտավոր են պատշաճ կատարել իրենց կողմից ստանձնված պայմանագրային, ինչպես նաև այլ (այտապայմանագրային) հիմքերից ծագող պարտավորությունները:

Սակայն օբյեկտիվորեն հնարավոր որոշ իրավիճակներն արգելափակում են այդ պարտավորությունների պատշաճ կատարման հնարավորությունը:

Կողմերի կամքից անկախ հանգամանքներում քաղաքացիաիրավական պարտականությունների չկատարումն արդարացիորեն համարվում է այդ պարտավորությունների կատարման կասեցման կամ պայմանագրի լուծման, պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման համար պատասխանատվությունից ազատման հիմք:

Իրադարձությունը, որը չի կարող ողջամտորեն կանխատեսվել, վերահսկվել, համարվում է, անհաղթահարելի ուժ (force majeure[1] – գերակա կամ անդիմադրելի/անհաղթահարելի ուժ):

Ընդ որում, այս դրույթները կիրառելի կարող են լինել ինչպես պայմանագրային, այնպես էլ դելիկտային և քվազի-դելիկտային իրավահարաբերություններում[2]:

Իրավունքի դասական տեսության մեջ իրավիճակը ֆորմաժորային որակելու համար գոյություն ունեն մի քանի հիմքեր, որոնք են մասնավորապես՝

- անհաղթահարելի ուժի ազդեցությունն արտաքին միջավայրից,

---

[1] https://www.merriam-webster.com/dictionary/force%20majeure?fbclid=IwAR0rG-tnoUr8G4_tMaFZ-pk33q3vg26X1yQh4nlBelPsCvoP71haE7l4u5c

[2] https://ombre43.com/2019/04/14/la-force-majeure-dans-la-responsabilite-civile/

- անհաղթահարելի ուժի առաջացման դեմ պարտավորության կողմերն անկարող են քայլեր ձեռնարկել (անկանխելի, անդիմադրելի),
- անհաղթահարելի ուժը պարտավորության կողմերի համար անկառավարելի է,
- անհաղթահարելի ուժի ազդեցությունն անհաղթահարելի է,
- անհաղթահարելի ուժի առաջացումը հիմնականում անկանխատեսելի է՝ պայմանագրի կնքման (պարտավորության ծագման պահին):

Այսինքն, ոչ թե գործարքն իսկզբանե (*ab initio*) անվավեր է, այլ կողմ(եր)ի որոշակի կամ բոլոր պարտավորություններն օբյեկտիվորեն անհնարին է իրականացնել և, ըստ այդմ, պայմանագիրը կարող է ընդհուպ մինչև վաղաժամկետ լուծվել՝ չառաջացնելով այն բացասական իրավական հետևանքները, որոնք այլ պայմաններում կառաջանային պարտավորությունների խախտման հիմքով:

Ընդ որում, յուրաքանչյուր դեպքում հնարավոր են իրավիճակներ, երբ օբյեկտիվորեն առկա է անհաղթահարելի ուժ, և դրա ազդեցությունը տարածվում է բազմաթիվ անձանց պարտավորությունների կատարման ընթացքի վրա, սակայն պարտավորության բնույթով պայմանավորված՝ անհաղթահարելի այդ ուժի ազդեցությունը չի տարածվում կամ նվազ չափով է տարածվում այլ իրավահարաբերության սուբյեկտ(ներ)ի վրա:

Այսինքն, անհաղթահարելի ուժի ազդեցության առկայությունը կոնկրետ պարտավորության կատարման վրա ենթակա է ապացուցման՝ համապատասխան իրավական գործընթացի շրջանակներում: Ընդ որում, արդարացի է, որ այդ հանգամանքն ապացուցի այն կողմը, որը պնդում է, որ պարտավորությունն իր կողմից խախտվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Մյուս կողմից, պայմանագրի ազատության (դիսպոզիտիվության սկզբունքը) ենթադրում է, որ կողմերն ազատ են նախատեսել իրենց միջև կնքվող

պայմանագրում անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պարտավարությունների չկատարման կամ անպատշաճ կատարան դեպքում պատասխանատվությունից չազատվելու կամ դրա միայն որոշակի տեսակների դեպքում պատասխանատվությունից կամ պարտավորության կատարումից ազատման հնարավորություն կամ օրենքով չսահմանված տեսակի անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պատասխանատվությունից կամ պարտավորության կատարումից ազատման կամ կատարումը կասեցնելու հնարավորություն:

Անհաղթահարելի ուժի մասին գերմանական քաղաքացիական օրենսգիրքը տարբեր հոդվածներում խոսում է, սակայն հասկացությունը չի սահմանում: Հասկացության սահմանումը կարելի է դուրս բերել գիտությունից ու դատական պրակտիկայից: Ընդ որում, անհաղթահարելի ուժի ազդեցության առկայությունը պետք է դիտարկել յուրաքանչյուր կոնկրետ պարտավորության կտրվածքով:

Օրինակ՝ եթե տուրիստական գործակալության հետ պայմանագիր է կնքվել պայմանականորեն *X* երկրում հանգստանալու համար, ու ճամփորդությունից մի քանի օր առաջ այդ երկիրը վիզայի ռեժիմ է սահմանում, որը մինչ այդ չկար, այնպես որ անձն այլևս չի կարողանում վիզա ստանալ, այդ փաստը տվյալ պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժ է:

Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում պարտավորության կատարումից հրաժարվելը պատասխանատվություն չի առաջացնում, քանի որ այդ դեպքում բացակայում է պարտապանի մեղքը[3]:

Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1218-րդ հոդվածի[4] համաձայն՝

«Պայմանագրային իրավահարաբերության մեջ առկա է անհաղթահարելի ուժ, որը խոչընդոտում է պարտապանի կողմից իր պարտավորությունների

---

[3] https://www.gesetze-im-internet.de/englisch_bgb/

[4] https://www.legifrance.gouv.fr/affichCodeArticle.do?idArticle=LEGIARTI000032041431&cidTexte=LEGITEXT000006070721&dateTexte=20161001&fbclid=IwAR32ruVaRFEgsBUxDeD4iW0XkRVEkTYabamVOSV-qvb82sN-CRZI5nfomfQ

կատարմանը, եթե տեղի ունեցած իրադարձությունը դուրս է պարտապանի վերահսկողությունից, այդ իրադարձությունը չէր կարող ողջամտորեն կանխատեսվել պայմանագրի կնքման պահին և համապատասխան միջոցների կիրառմամբ դրա հետևանքներից խուսափելն անհնարին է:

Եթե խոչընդոտը կրում է ժամանակավոր բնույթ, ապա պարտավորության կատարումը կասեցվում է, բացառությամբ եթե առաջացած ուշացումն արդարացնում է պայմանագրի լուծումը: Եթե խոչընդոտը վերջնական է, ապա պայմանագիրն ինքնաբերաբար լուծվում է, և կողմերն ազատվում են իրենց պարտավորությունների կատարումից (...):»:

Զարգացած իրավական համակարգ ունեցող երկրներից շատերում կիրառվում է նաև ֆրուստրացիայի (frustration[5]) հասկացությունը, որի մեկնաբանման շրջանակը կարող է լինել ավելի լայն, քան անհաղթահարելի ուժի դեպքում: Օրինակ, վարձակալված տարածքի հրդեհվելը, անհրաժեշտ միջոցների պակասությունը՝ որոշակի պայմանների առկայության դեպքում և այլն:

Այսինքն, այստեղ օրենսդիրն ու իրավակիրառ մարմիններն ավելի հեռուն գնալու հանարավորություն են տալիս՝ առանց բացասական իրավական հետևանքների գործարքի լուծման կամ կասեցման հիմք համարելով ոչ միայն համեմատաբար գլոբալ իրադարձությունները (Hardships, Acts of God – Աստծո գործողություններ, օրինակ՝ ջրհեղեղ, երկրաշարժ և այլն), որոնք անհաղթահարելի ուժի դասական օրինակներ են, այլ ավելի լոկալ բնույթի բարդությունները, որոնք և առաջանում են կողմերի կամքից անկախ և թույլ չեն տալիս պատշաճ կատարել ստանձնված պարտավորությունները[6]:

---

[5] https://www.oxfordlawtrove.com/view/10.1093/he/9780198748397.001.0001/he-9780198748397-chapter-21, https://demarco.com.au/de-marco-thinks/dealing-with-frustration-and-force-majeure-in-contracts

[6] https://www.nortonrosefulbright.com/en-pg/knowledge/publications/b54cf723/force-majeure-hardship-clauses-and-frustration-in-english-law-contracts-amid-covid-19

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը չի տալիս անհաղթահարելի ուժի վերաբերյալ համապարփակ կարգավորումներ՝ չնայած նրան, որ պրակտիկայում գրեթե բոլոր պայմանագրերի եզրափակիչ դրույթները պարունակում են անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությունից ազատման հիմքը:

Ներկայումս ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ողջ աշխարհում տարածված համաճարակի պայմաններում ավելի ակնհայտ է դառնում ներպետական օրենսդրության այս բացը, քանի որ քաղաքացիական իրավունքի հիմնաքարային դրույթները սահմանող իրավական ակտում՝ քաղաքացիական օրենսգրքում ընդհանուր կարգավորման բացակայության պայմաններում յուրաքանչյուրն իր տեսակետից է մեկնաբանում, թե՝

- արդյո՞ք առկա է անհաղթահարելի ուժ, թե՞ ոչ,
- արդյո՞ք դրա ազդեցությունը տրված իրավահարաբերության կտրվածքով առկա է, թե՞ ոչ,
- արդյո՞ք նույն իրավական ռեժիմը կարելի է կիրառել արտապայմանագրային հարաբերությունների նկատմամբ,
- արդյո՞ք դրա առկայության պայմաններում պարտավորության կատարումը պետք է կասեցվի կամ պայմանագիրը լուծվի կամ անձն ազատվի պարտավորության խախտման համար պատասխանատվությունից, թե՞ ոչ և այլն:

Ըստ այդմ, սույն նախագծով առաջարկվում է հնարավորինս բաց կարգավորում, որով՝

– սահմանվում են ֆորսմաժորային իրադրության հատկանիշները,
– սահմանվում են այդ փաստի ազդեցությամբ պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման իրավական հետևանքները՝ թույլ տալով նաև այլ դրույթներ նախատեսել պայմանագրով,

- թվարկվում են հնարավոր ֆորսմաժորային իրադրություններ՝ թույլ տալով նաև այլ իրավիճակները, ելնելով օբյեկտիվ իրականությունից, ֆորսմաժորային որակելու հնարավորություն,
- սահմանվում է վեճի առկայության դեպքում ապացուցման բեռի բաշխումը,
- հնարավորություն է տրվում պայմանագրով նախատեսել այլ դրույթներ, քան սահմանվում են օրենսգրքով:

Նախագծի անցումային դրույթով առաջարկվում է հետադարձ ուժ տալ օրենքին՝ մինչ այն պահը, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պաշտոնապես հայտարարվեց արտակարգ դրություն՝ կապված համաճարակի տարածման հետ: